ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

*31 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թ.*
*ԹԻՎ 1500*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Սիրելի դպրոցականներ, մանկավարժներ, ծնողներ և առաջին դասարանցիներ.*

Շնորհավորում եմ բոլորիս Գիտելիքի, գրի և դպրության օրվա առթիվ:

Սեպտեմբերի 1-ն ազդարարում է ուսումնական տարվա սկիզբը, որը նաև գիտելիքներով հարստանալու, իրական արժեքներ ճանաչելու և նոր նպատակներ կյանքի կոչելու սկիզբն է: Տոնական այս օրը հատկապես առանձնակի կարևորություն ունի բոլոր նրանց համար, ովքեր առաջին անգամ են ոտք դնելու դպրոց և սկսելու իրենց լուսավոր ու մեծ ճանապարհի սկիզբը:

Նոր ուսումնական տարին թող լինի առավել հագեցած և արդյունավետ, քանզի որակյալ կրթությունը մեր ժողովրդի կյանքում միշտ էլ եղել է կարևոր և հենց դրա միջոցով է, որ մենք պետք է լուծենք մեր և պետության առջև ծառացած խնդիրները:

***Շնորհավոր Սեպտեմբերի 1:***

Թ. ՃԱՀՎԵՐԴՅԱՆ